ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

29 հունվարի 2015 թ. **N 11-Ա**

«ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 112-րդ հոդվածի,<<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի թ) ենթակետի դրույթներով և համաձայն <<Քաջարանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վ.Ավագյանի անձնական դիմումի,**կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1.2015թ. հունվարի 29-ից լուծել <<Քաջարանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վարդան Ավագյանի հետ 2006թվականի հունիսի 1-ին կնքված N 12 աշխատանքային պայմանագիրը:

Հիմք. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդված, Վ.Ավագյանի անձնական դիմումը:

2. << Քաջարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

3.2015թ. հունվարի 29-ից << Քաջարանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար նշանակել Հովիկ Դավթյանին մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացումը:

Հիմք Հ. Դավթյանի անձնական դիմումը:

4..Ընկերության ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Կոզմանով Կառլեն	մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Գևորգյան Նունե	մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Ավետիսյան Համլետ	մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ
Ավագյան Վարդան	<< Քաջարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ նախկին տնօրեն, հանձնող
Դավթյան Հովիկ	<< Քաջարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ընդունող:

5.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ.հունվարի 29
ք. Կապան